

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3104 Գյումրի, Վարպետաց 176, 301,303, հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37  
Էլ փոստ՝ info@shirakcentre.org  
Կայք՝ www.shirakcentre.org

*Գյումրու քաղաքապետ պարոն Վ. Ղուկասյանին*

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՄ**

*Գյումրու «Չերքեզի ձոր» տարածքում ինքնակամ կառույցների օրինականացման խնդրի  
վերաբերյալ*

Պարոն Ղուկասյան

Ինչպես գիտենք, Գյումրու «Չերքեզի ձոր» տարածքում հիմնականում երկրաշարժից հետո տասնյակ անօթևան ընտանիքներ տեղադրեցին տնակներ, ինչպես նաև կառուցեցին քարաշեն և կիսաքարաշեն բնակելիներ: Բսկ նույն՝ երբեմնի ծառայատ և գեղատեսիլ ձորին հարող տարածքում կան տասնյակ քարաշեն տներ, որոնք կառուցվել են դեռևս նախորդ դարի 50-ական թվականներին:

Այդ թաղամասի բնակիչները բազմիցս են դիմել տարբեր ատյաններ իրենց ինքնակամ բնակելի կառույցներն օրինականացնելու խնդրով: Սակայն, ինչպես գիտենք, Գյումրու գլխավոր հատակագծով այդ տարածքը համարվում է կանաչ գոտի, ուստի այնտեղ կառուցված շինությունները ենթակա չեն օրինականացման:

Վերջին շրջանում հանրապետական մամուլում մի շարք հրապարակումներ եղան այն մասին, որ ինչ-որ անձինք թաղամաս են այցելել և իբր թե սեփականաշնորհման համար՝ բնակիչների զբաղեցրած տարածքների չափազրույմներ են իրականացրել, դրա համար յուրաքանչյուր ընտանիքից գանձել են 20.000-ից 30.000 դրամի չափով գումարներ, սակայն որևէ փաստաթուղթ չեն տվել: Ավելին, բնակիչները չգիտեն անգամ նրանց անուն-ազգանունները և չափազորող կազմակերպության անվանումը: «Չերքեզի ձորի» բնակիչներն իրենց ինքնակամ կառույցների օրինականացման խնդրում ստեղծված անորոշության մասին մտահոգություններ հայտնեցին նաև մեր հանդիպման՝ նախորդ օրը թաղամաս կատարած մեր այցելության ժամանակ:

Առաջնորդվելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Արդյո՞ք քաղաքապետարանը տեղյակ է «Չերքեզի ձոր» թաղամասի բնակչությունից չափազրման և քարտեզագրման պատճառաբանությամբ գումարներ գանձելու դեպքի մասին,
2. եթե կատարվել է անօրինական գործողություն, արդյո՞ք այդ մասին տեղյակ պահվել են իրավապահ մարմինները,
3. Գյումրիում ինքնական կառույցների օրինականացման նպատակով ո՞ր կազմակերպություններն են իրականացնում չափազրման և քարտեզագրման աշխատանքները,
4. Գյումրու քաղաքապետարանն ի՞նչ ծրագրեր ունի այդ թաղամասի բնակելիների օրինականացման և առհասարակ «Չերքեզի ձորի» վերականգնման ու զարգացման համար,
5. արդյո՞ք «Չերքեզի ձորի» տարածքից որոշ հատվածներ տրված են երկարաժամկետ վարձակալության որևէ անհատի կամ կազմակերպության: Եթե այո, ապա ու՞մ, ի՞նչ հիմքով և քանի՞ տարի ժամանակով,
6. եթե կանաչ տարածքը վերականգնելու նպատակով այնուամենայնիվ բնակելիները ենթակա են քանդման, ապա ինչպե՞ս են լուծվելու այդ թաղամասում բնակվող ընտանիքների բնակարանային խնդիրները: Ինչպես է լուծվելու նաև այդ տարածքում գործող, Գյումրու ռուսական ռազմակայանին պատկանող հսկայական լվացքատունը տեղափոխելու հարցը, որի ծառայությունից օգտվող օրական տասնյակ բեռնատար մեքենաներ են մուտք գործում «Չերքեզի ձորի» կանաչ տարածք:

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ՝

Վահան Թումասյան

Գյումրի

28 հունիսի 2011 թ.





ԳՅՈՒՄՐՈՒ ԶԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ք. Գյումրի, Վարդանանց 1

Հեռ. (374041) 5-39-77, 3-26-06

Ցպս. ԻՈՍՐ (374041) 3-46-05

N \_\_\_\_\_ 8 \_\_\_\_\_

„ 6 „ 07 \_\_\_\_\_ 2011.

Ի պատասխան ‘Շիրակ կենտրոն’ հասարակական կազմակերպության՝

Չերքեզի ձորի տարածքում բնակելի կառույցների օրինականացման և տարածքի հետագա կառուցապատման հետ կապված տեղեկատվության վերաբերյալ հարցմանը,

Գյումրիի քաղաքապետարանը պարզաբանում է, որ Չերքեզի ձորի տարածքի բնակչությունից չափագրման և քարտեզագրման պատճառաբանությամբ գումարներ զանձելու կապակցությամբ, քաղաքապետարանն ահազանգ չի ստացել, հետևաբար չէր կարող այդ հարցի մասին տեղեկացնել իրավապահ մարմիններին:

Գյումրու ինքնակամ կառույցների օրինականացման նպատակով չափագրման և քարտեզագրման աշխատանքներն իրականացվում են հանրապետությունում արտոնագրով գործող մի քանի կազմակերպությունների կողմից: Ուստի նշված տարածքի բնակիչների կողմից առաջ քաշված հարցերը սեփական նախաձեռնությամբ չափագրումների նպատակահարմարության վերաբերյալ, պետք է ուղղվեն նշյալ կազմակերպություններին:

Գյումրու քաղաքապետարանը Չերքեզի ձորի հետագա վերականգնումը և զարգացումը իրականացրել և իրականացնելու է հավատարիմ մնալով քաղաքի գլխավոր հատակագծին՝ որպես հանգստի գոտի:

Տեղեկացնենք, որ Գյումրու քաղաքապետարանի որդեգրված սկզբունքի համաձայն, ժամանակավոր կառույցները միանշանակ չեն օրինականացվելու, դրանք ենթակա են տեղահանման, իսկ ձորի մեջ գտնվող տները, միանշանակ, չեն օրինականացվի:

Եվս մեկ անգամ շեշտենք, որ ձորի միայն վերևի հատվածում 50-60-ականներին կառուցված տների օրինականացման հարցը քաղաքապետարանը միշտ էլ պատրաստակամ է լուծելու:

Հարկ ենք համարում նշել, որ միայն հանգստի գոտիների ստեղծելու նպատակով, թաղամասի որոշ հատվածներ քաղաքապետարանի կողմից տրված են վարձակալության:

Ինչ մնում է թաղամասում բնակվողների բնակարանային խնդիրներին, ապա դրանք կլուծվեն համաձայն գործող օրենքի: Ի դեպ, ինչպես նշված է “Շիրակ կենտրոն ” հ/կ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցման մեջ, թաղամասի բնակիչների գերակշիռ մասը պետության կողմից բնակարանային փոխհատուցման ենթակա չէ:

Հարցման մեջ նշված տարածքում գործող ռուսական ռազմակայանին պատկանող լվացքատան շենքի խնդիրը կկարգավորվի ըստ տարածքի կառուցապատման և կազմակերպման նախագծի:

Գյումրու քաղաքապետարանի մամուլի քարտուղարություն